



**ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**1992 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 16-ԻՆ ՎԱԼԵՏԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ  
ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ  
(ՎԵՐԱՆԱՅՎԱԾ) ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

ք.Ստեփանակերտ

15 ապրիլի 2015թ.

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն դատարանը՝ կազմով.  
Ն.Նարիմանյանի (նախագահող), Ա.Աբրահամյանի, Գ.Արզումանյանի, Գ.Գրիգորյանի,  
Ի.Կարապետյանի, Ա.Հայրապետյանի, Վ.Հովսեփյանի (զեկուցող),

մասնակցությամբ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի  
պաշտոնական ներկայացուցիչ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
կառավարությանն առընթեր զբոսաշրջության և պատմական միջավայրի  
պահպանության վարչության պետ Ս.Շահվերդյանի,

համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության  
114-րդ հոդվածի 1-ին մասի 1.2-րդ կետի, 2-րդ մասի 2.1-ին կետի,  
«Սահմանադրական դատավարության մասին» Լեռնային Ղարաբաղի  
Հանրապետության օրենքի 13-րդ, 26-րդ և 60-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «1992 թվականի  
հունվարի 16-ին Վալետայում ստորագրված՝ Հնագիտական ժառանգության  
պահպանության մասին եվրոպական կոնվենցիայում (վերանայված) ամրագրված  
պարտավորությունների՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ»  
գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի  
դիմումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն դատարան՝  
մուտքագրված 2015 թվականի մարտի 13-ին:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը,  
Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ գրավոր

բացատրությունը, հետազոտելով Հնագիտական ժառանգության պահպանության մասին եվրոպական կոնվենցիան և գործում առկա մյուս փաստաթղթերը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն դատարանը

## Պ Ա Ր Ջ Ե Ց

1. Հնագիտական ժառանգության պահպանության մասին եվրոպական կոնվենցիան (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) ստորագրվել է 1992թ. հունվարի 16-ին Վալետա քաղաքում՝ նպատակ ունենալով լրացնել 1969թ. մայիսի 6-ին Լոնդոնում ստորագրված՝ Հնագիտական ժառանգության պահպանության մասին եվրոպական կոնվենցիայում ամրագրված սկզբունքները, հաշվի առնելով եվրոպական երկրներում կառուցապատման քաղաքականության զարգացումը, և պահպանել եվրոպական ընդհանուր հիշողության աղբյուր հանդիսացող հնագիտական ժառանգությունը: Կոնվենցիան հիմք է հանդիսանում հնագիտական ժառանգության պահպանության բնագավառում համաեվրոպական համագործակցության համար:

2. Կոնվենցիան բաղկացած է նախաբանից և 18 հոդվածներից: Այն ուժի մեջ է մտել 1995թ. մայիսի 25-ին:

3. Կոնվենցիային միանալով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

-ստեղծել հնագիտական ժառանգության պահպանության համար իրավական համակարգ. այս պարտավորությունը ներառում է հնագիտական ժառանգության գույքացուցակի վարում և հուշարձանների կամ պահպանվող գոտիների դասակարգում, հնագիտական արգելանոցների հիմնում, հնագիտական ժառանգության տարրեր գտնողի՝ իրավասու մարմիններին դրա մասին հայտնելու պարտավորության նախատեսում,

-հնագիտական ժառանգության պահպանության և հնագիտական հետազոտական աշխատանքների գիտական նշանակությունը երաշխավորելու նպատակով՝ պեղումների և այլ հնագիտական գործունեության նկատմամբ կիրառել թույլտվության և վերահսկողության ընթացակարգեր,

-ձեռնարկել հնագիտական ժառանգության ֆիզիկական պաշտպանության միջոցներ,

-ձեռնարկել համապատասխան միջոցներ հնագիտական ժառանգության ամբողջական պահպանման համար,

-Ֆինանսական աջակցություն նախատեսել հնագիտական հետազոտությունների համար, ավելացնել կանխարգելիչ հնագիտության նյութական միջոցները,

-դյուրացնել գիտական տեղեկատվության հավաքման ու տարածման գործընթացը,

-խթանել հասարակության իրազեկվածությունը՝ հնագիտական ժառանգության արժեքի վերաբերյալ գիտակցական վերաբերմունք ձևավորելու ու զարգացնելու նպատակով,

-հնագիտական ժառանգության առարկաների անօրինական շրջանառությունը կանխարգելելու նպատակով՝ կազմակերպել տեղեկատվության փոխանակում պետական իրավասու մարմինների և գիտական հաստատությունների միջև՝ արձանագրված անօրինական պեղումների վերաբերյալ, սահմանափակել հայտնաբերված իրերի, ապօրինի կամ պաշտոնական պեղումների

ընթացքում յուրացված հնագիտական ժառանգության առարկաների անվերահսկելի տեղաշարժը,

-փոխադարձաբար տրամադրել գիտական և տեխնիկական աջակցություն, նպաստել համապատասխան մասնագետների փոխանակմանը:

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն դատարանը գտնում է, որ Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունները կնպաստեն պատմամշակութային հուշարձանների պահպանության և վերականգնման բնագավառում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի 13-րդ կետով ամրագրված՝ պետության պարտականությունների կատարմանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության 114-րդ հոդվածի 1-ին մասի 1.2-րդ կետով և 3-րդ մասով, «Սահմանադրական դատավարության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 49-րդ, 51-րդ, 52-րդ և 60-րդ հոդվածներով, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. 1992 թվականի հունվարի 16-ին Վալետայում ստորագրված՝ Հնագիտական ժառանգության պահպանության մասին եվրոպական կոնվենցիայում (վերանայված) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության 114-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ՝**

**Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ**

15 ապրիլի 2015 թվականի

**ԳԴՈ – 13**